

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 27

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝

Հաստատել ավագանու 13.12.2016 թ . հերթական նիստի օրակարգը.

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

2. 2017 թվականի ընթացքում համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

3 .Սիսավան համայնքի ղեկավարի նոր վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Սիսավան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 23 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

4 . Արարատի մարզի Սիսավան համայնքի 2016 թվականի բյուջեում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

5. 2017 թվականի բյուջեի հաստատման մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 28-Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ , 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղականտուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,
բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35 000 դրամ,
բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70 000 դրամ.
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային

չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղականտուրքը սահմանվում է 2500 դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
   1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ.
   2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ:
5. Համայնքի տարածքում՝
   ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 200 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
   բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200 000 դրամ.
   գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղականտուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 40 000 դրամ.
   գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղականտուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
   հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ.
   ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ.
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղականտուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
   ա) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ.
   բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.
   գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 :

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրիտեղականտուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.
դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համարտեղականտուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200 դրամ: Սիսավան համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համարտեղականտուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համարտեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

10. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համարտեղականտուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

11. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը սահմանել 2000 դրամ :

12. Աղբահանության վճարը սահմանվում է՝
1) կենցաղային աղբի համար՝ անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 150 դրամ,
2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ
բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 6000 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 29

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆՈՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 23 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի դրույթներով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնքի ղեկավարի նոր վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սիսավան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 23 որոշումը ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Սիսավան
համայնքի ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 13-ի թիվ 29 որոշման

Սիսավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 13
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Համայնքի ղեկավար		280 000

Հայեցողական պաշտոններ

Համայնքի ղեկավարի տեղակալ	1	166 000

Համայնքային ծառայության պաշտոններ

գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1 /	1	180 000
գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1 /	1	170 000
գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2 /	1	170 000
գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1 /	1	168 000
գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1 /	1	100 000

Քաղաքացիական աշխատողներ

Մշակույթի տան տնօրեն	1	92 000
Գրադարանավար	1	80 000
Մարզիչ	1	80 000
Պարի ուսուցիչ	1	80 000

Տեխսպասարկման անձնակազմ

Պահակ	1	100 000
Հավաքարար	1	80 000

Համայնքի ղեկավար՝ Ս. Թարթիկյան

Գլխ. բարձրաստիճան Հ. Հարությունյան

Կազմված է 13.12.2016 թ.
Բաղկացած է երկու էջից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 30-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով

1. «Հանգիստ մշակույթ կրոն » տնտեսագիտական դասակարգման հատուկ նպատակային այլ նյութեր 4269 հոդվածից պակասեցնել 565.0 հազ. դրամ, այն ուղղել « փողոցների լուսավորություն » տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածին :

2. «Մշակույթի տներ և ակումբներ » տնտեսագիտական դասակարգման հատուկ նպատակային այլ նյութեր 4269 հոդվածից պակասեցնել 370.0 հազ. դրամ, այն ուղղել « փողոցների լուսավորություն » տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածին :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 31-Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով՝

Հաստատել Սիսավան համայնքի 2017 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

13.12.2016 Թ. ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

2017թ.-ի վարչական բյուջեն կազմում է ---------- 46 631,4 հազ. դրամ

2017թ.-ի վարչական բյուջեի եկամտային մաս `

1. Գույքահարկ ---------- 1920.0 հազ. դրամ

որից՝

գույքահարկ շենք և շինություններից ---------- *120,0 հազ. դրամ*

գույքահարկ փոխադրամիջոցներից ---------- *1800,0 հազ. դրամ*

2. Հողի հարկ---------- 8300,0 հազ. դրամ

3. Տեղական տուրք---------- 1496.0 հազ. դրամ

որից՝

ծխախոտի վաճառքի թույլտվություն ---------- *48,0 հազ. դրամ*

ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն ---------- *48,0 հազ. դրամ*

Աղբահանության վճար---------- *1400.0 հազ.դրամ*

4. Դոտացիա ---------- 34407,2 հազ. դրամ

5. Հողերի վարձակալություն---------- 148,2 հազ. դրամ

6. Այլ եկամուտ գույքի վարձակալությունից ---------- 360,0 հազ. դրամ

2016թ.-ի վարչական բյուջեի մաս՝

1. Կառավարման ապարատ----------18438.0 հազ. դրամ

որից՝

աշխատավարձ----------*/4111/*----------*15768,0 հազ. դրամ*

էներգետիկ ծառայություն----------*/4212/*---------- *400.0 հազ. դրամ*

կապի ծառայություն----------*/4214/*---------- *150.0 հազ. դրամ*

ապահովագրական ծախսեր----------*/4215/*---------- *60,0 հազ.դրամ*

մեքենաների ընթացիկ նորոգում----------/4252/---------- 600.0 հազ. դրամ

գրասենյակային նյութեր----------/4261/---------- 250.0 հազ. դրամ

տրանսպորտային նյութեր----------/4264/---------- 800.0 հազ. դրամ

հատուկ նպատակային այլ նյութեր----------/4269/---------- 100.0 հազ. դրամ

Թերթեր և ամսագրեր----------/4234/---------- -- 150.0 հազ. դրամ

Համակարգչային ծառայություններ----------/4232/----------100.0 հազ. դրամ

Մասնագիտական ծառայություններ----------/4241/----------60.0 հազ.դրամ

2.Սոցիալական հատուկ արտոնություններ---------- 5500,0 հազ. դրամ

որից՝

թաղման նպաստներ----------/4726/---------- 1000,0 հազ. դրամ

այլ նպաստներ----------/4729/---------- 4500,0 հազ. դրամ

3. Հասարակական կազմակերպություններ---------- 300,0 հազ. դրամ

որից՝

նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմ. -/4819/---------- 300,0 հազ. դրամ

4.Փողոցների լուսավորություն---------- 1850,0 հազ. դրամ

որից՝

էներգետիկ ծառայություն----------/4212/----------900,0 հազ. դրամ

ընթացիկ նորոգում և պահպանում----------/4251/----------950,0 հազ. դրամ

5.Ջրամատակարարում և կոյուղու համակարգ---------- 1250,0 հազ. դրամ

որից՝

բնակմունալ ծառայություն----------/4213/---------- 400,0. հազ. դրամ

ընթացիկ նորոգում և պահպանում----------/4251/----------.----- 850,0 հազ. դրամ

6.Հանգիստ մշակույթ ----------1720.0 հազ. դրամ

որից՝

գույքի վարձակալություն----------/4216/----------.-----100,0. հազ. դրամ

հատուկ նպատակային այլ նյութեր----------/4269/----------1500,0 հազ. դրամ

ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ----------/4239/----------120.0 հազ. դրամ

7. Մշակույթի տներ և ակումբներ ----------6884,0 հազ.դրամ

որից՝

աշխատավարձ ...../4111/.....5184,0 հազ.դրամ

հատուկ նպատակային այլ նյութեր----------/4269/---------- 650,0 հազ. դրամ

ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ----------/4239/---------- 550,0 հազ. դրամ

8.Աղբահանություն---------- 3200,0 հազ. դրամ

որից՝

բնակմունալ ծառայություն----------/4213/----------2600,0 հազ. դրամ

տրանսպորտային նյութեր----------/4264/---------- ---------- 600,0 հազ. դրամ

9.Ճանապարհային տրանսպորտ---------- 1650,0 հազ. դրամ

որից՝

ընթացիկ նորոգում և պահպանում----------/4251/---------- ---------- 950,0 հազ. դրամ

տրանսպորտային նյութեր----------/4264/---------- 700,0 հազ. դրամ

10.Արտադպրոցական դաստիրակություն---------- 300,0 հազ.դրամ

որից՝

այլ նպաստներ----------/4729/---------- 300,0. հազ. դրամ

11.Բարձրագույն կրթություն---------- 900,0 *հազ. դրամ*

որից՝

այլ նպաստներ----------/4729/----------900,0 հազ. դրամ

12. Կանաչ տարածքների պահպանում...../4269/.....200.0 հազ.դրամ

13.Պահուստային ֆոնդ ----------/4891/----------4439,4 հազ. դրամ

Համայնքի ղեկավար՝ Ս. Թարթիկյան

Կազմված է 13.12.2016թ.
Բաղկացած է երեք թերթից